**«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում անտառավերականգնման և անտառապատման աշխատանքներ» նախատեսվող գործունեության վերաբերյալ անցկացված հանրային քննարկման (լսումների)**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**10.08.2020թ.** **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև ՀՀ պարետի 2020 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» թիվ 63 որոշման համաձայն՝ «Կապանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի փոքր դահլիճում 2020 թվականի օգոստոսի 6-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ հանրային քննարկում (լսումներ)՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում անտառավերականգնման և անտառապատման աշխատանքներ» նախատեսվող գործունեության վերաբերյալ (այսուհետ՝ նաև Հանրային քննարկում կամ Քննարկում):

Հանրային քննարկման մասին ծանուցումը հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ 137 (7349) համարում, տեղադրվել ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.kapan.am), փակցվել համայնքի ղեկավարի նստավայրի և հանրային նշանակության շենքերի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակի վրա:

Քննարկմանը ներկա էին «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության ներկայացուցիչները, «Բիոգեոտեխ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի, Կապանի համայնքապետարանի, «Կապանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատակիցներ, ինչպես նաև «Զանգեզուր» հեռուստաընկերության ներկայացուցիչներ:

Հանրային քննարկման մասնակիցների ցանկը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց քննարկման պատասխանատուն՝ ձեռնարկողի հետ համատեղ:

Հանրային քննարկման ընթացքում հնչեցված ելույթները, դիտողությունները, առաջարկությունները, հարցերը և պատասխանները:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դ. Հայրապետյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ 137 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am): Նշեց, որ նախաձեռնող կողմը՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն, ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման դրույթներով, 2020 թվականի հուլիսի 21-ին դիմել է ազդակիր համայնքին՝ հանրային լսման 1-ին փուլի կազմակերպման համար: Շուրջ մեկուկես տարի է, ինչ Կապան համայնքի և «ԶՊՄԿ» ՓԲԸ փոխհամագործակցությունը թևակոխել է կառուցողական երկխոսության մակարդակ, որի վառ ապացույցը հենց այսօրվա նախագիծն է: Վերջինս իրականացվում է ՀՀ պարետի կողմից սահմանված բոլոր սահմանափակումների պահպանմամբ: Այս հանրային քննարկումը տարբերվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության դասական քննարկումներից, քանի որ ցանկացած արտադրական գործունեության ընթացքում շատ, թե քիչ վնաս է հասցվում շրջակա միջավայրին, բայց այս քննարկման պարագայում ակնկալվում է շրջակա միջավայրի վրա միայն դրական ազդեցություն: Քննարկումը ուշագրավ է նաև այն հանգամանքով, որ այն հատվածները, որտեղ պետք է իրականացվի անտառավերականգնման և անտառապատման աշխատանքներ, այդտեղ Ընկերությունը շրջակա միջավայրին վնաս պատճառող որևէ գործողություն չի իրականացրել:

Այնուհետև խոսքը փոխանցվեց «ԶՊՄԿ» ՓԲԸ կայուն զարգացման գծով տնօրեն՝ Սամվել Ալեքսանյանին:

**Խոսք (Սամվել Ալեքսանյան)**

Ողջունում եմ բոլորին, ներկայացնեմ մեր գործընկերներին՝ Զարուհի Տոնապետյան (վարչական դեպարտամենտի ղեկավար), Ասյա Ղազարյան (կայուն զարգացման գծով մասնագետ), Պերճ Խաչատրյան (իրավաբանական դեպարտամենտի ղեկավար), Հասմիկ Մկրտումյան (բնապահպանության բաժնի պետ), Արման Վարդանյան (լեռնային պլանավորման դեպարտամենտի ղեկավար), Գարեգին Սևոյան (կապալառու մասնագիտացված ընկերության՝ «Բիոգեոտեխ» ՍՊԸ տնօրեն): Խոսքը փոխանցեմ իրավաբանական դեպարտամենտի ղեկավար՝ Պերճ Խաչատրյանին:

**Զեկույց (Պերճ Խաչատրյան)**

Ողջունում եմ բոլորին «ԶՊՄԿ» ՓԲԸ կողմից նախաձեռնված այս հանրային լսմանը: Ինչպես նշեց պարոն Հայրապետյանը հանրային լսումը հրավիրվել էր Կապան համայնքի

տարածքում անտառապատման և անտառավերականգնման աշխատանքների իրականացման հետ կապված նախատեսվող գործունեության առանցքային հիմնարար հարցերը քննարկելու, որոշակի առաջարկություններ, դիտարկումներ կատարելու, դրանց վերաբերյալ քննարկում կազմակերպելու և այնուհետև դրանց արդյունքները հետագա նախագծային փաթեթներում ընդգրկելու համար: Սա առաջին հանրային լսումն է, որը, ըստ էության, նպատակ է հետապնդում հանրային լսման մասնակիցներին, ինչպես նաև հանրությանը ծանուցել նախատեսվող գործունեության մասին, ստանալ համապատասխան առաջարկություններ և անցնել նախագծային աշխատանքին, որին հետևելու է համապատասխանաբար նախնական գնահատման հայտի կազմումը, ներկայացումը լիազոր մարմնին, այնուհետև դրա վերաբերյալ հանրային քննարկման կազմակերպումը և հետագա ընթացքը: Այժմ համառոտ ներկայացնեմ, թե ինչով է պայմանավորված այս նախաձեռնությունը և ինչ գործողություններ են նախորդել սրան: Մասնավորապես 2015 թվականի մայիսի 21-ին կառավարության որոշմամբ գերակա հանրային շահ է ճանաչվել Չափնիի, Արծվանիկի, Սևաքարի, Աճանանի գյուղական համայնքների վարչական սահմաններում «ԶՊՄԿ» ՓԲԸ ընդերքօգտագործման ծրագրի իրականացումը: Միաժամանակ այդ որոշմամբ սահմանվել են բոլոր այն հողամասերը, այն տարածքները, որտեղ պիտի իրականացվի այդ գերակա հանրային շահ ճանաչված ծրագիրը և այդ տարածքներից որոշները համապատասխանում են անտառային հողերի կատեգորիային: Հետևապես, առաջնորդվելով անտառային օրենսդրության պահանջներով ընկերությունը պետք է իրականացնի համապատասխանաբար իրեն հատկացված անտառային հողերի քանակից կրկնակի չափով անտառավերականգնման ծրագիր, ուստի և ներկայացվել է այս ծրագիրը: Գերակա հանրային շահ ճանաչելու որոշման շրջանակներում նախատեսվել է, որ մոտ 40 հա սահմաններում անտառային հողեր պետք է փոխադրվեն արդյունաբերական ընդերքօգտագործման, և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա: Այդքանով պետք է նվազի անտառային ֆոնդի հողերի կազմը, ուստի, «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը՝ որպես պատասխանատու հանքարդյունաբերող, նախաձեռնել է այս գործընթացը, որպեսզի համապատասխան կառավարության որոշման դրույթների շրջանակներում իրականացնի ավելի մեծ ծավալով անատառավերականգնման աշխատանքներ՝ մոտ 80 հեկտարի սահմաններում: Այդ աշխատանքները բաշխվել են 3 փուլի: Այսօր ներկայացվում է 1-ին փուլի նախագիծը, երբ Կապան համայնքում՝ մոտ 20 հեկտարի սահմաններում կիրականացվի անտառավերականգնման ծրագիր, իսկ մյուս 60 հեկտարը՝ համայնքի և լիազոր մարմնի հետ համաձայնեցման շրջանակներում, նախատեսվում է իրականացնել Կավարտի լքված հանքավայրի տարածքում: Բնականաբար կարող է հարց առաջանալ այն մասին, թե ինչու միանգամից հանրային լսում չի արվում ամբողջ 80 հեկտարի մասով: Չէ՞ որ Կավարտի այդ տարածքը կարելի է ասել բնապահպանական աղետ է և ավելի առաջնահերթ է: Սակայն այդ հարցի պատասխանը կայանում է նրանում, որ այս պահին

դեռևս անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ հետազոտություններ, որպեսզի պարզվի, թե ինչ տիպի անտառավերականգնում պետք է իրականացվի, մասնագիտական ինչ մոտեցում պետք է դրսևորվի, որպեսզի ապարդյուն չլինի ռեսուսների օգտագործումը: Ուստի այս պահին Ընկերությունը պատրաստ է իրականացնելու նախատեսված 20 հեկտարի անտառավերականգնում: Միաժամանակ ընկերությունը նախաձեռնել և արդեն իսկ ընթացք է տվել համապատասխան հետազոտությունների իրականացմանը, որոնք ուղղված կլինեն հետագա նախագծային գործունեությանը:

**Զեկույց (Համիկ Մկրտումյան)**

Փորձեմ ամփոփ ներկայացնել այն աշխատանքները, որոնք արվել են 20 հա անտառավերականգնման այս նախագիծը կյանքի կոչելու համար: 1-ին փուլով ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ, որում ներգրավվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, Կապանի համայնքապետարանի համապատասխան մասնագետներ և կենսաբանության ոլորտում բազմաթիվ տարիների փորձ ունեցող մի շարք գիտական աշխատակիցներ, ովքեր մեզ հետ համագործակցում են «Բիոգեոտեխ» ՍՊԸ-ի միջոցով, որի տնօրենն է կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ պարոն Գարեգին Սևոյանը, և, իհարկե, աշխատանքները կազմակերպվել են նաև մեր ընկերության մասնագետների շնորհիվ: Նախնական փուլով իրականացվել են տարածքների ուսումնասիրություն, որից 1-ին փուլով 20 հա անտառավերականգնման համար ընտրվել է 4 տարածք: Այդ տարածքներից 2 հեկտարը գտնվում է Կապան համայնքում, որից 1,5 հեկտարը՝ շուկայի մոտ, 0,5 հեկտարը՝ Դավիթ Բեկ թաղամասի հետնամասում: Նշեմ նաև, որ տարածքների ընտրությունը արվել է հիմնվելով Կապանի համայնքապետարանի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնագետների առաջարկությունների վրա: Ընտրվել են այն տարածքները, որտեղ հողերը ենթարկվել են էրոզիայի, դեգրադացված են և նախկինում՝ 90-ական թվականներին ենթարկվել են անտառահատման: Այս ընտրությունների ժամանակ ուշադրություն չի դարձվել տեխնիկական և ֆինանսական հնարավորությունների սահմանափակմանը: Այսինքն՝ ընտրված տարածքները, որտեղ պետք է իրականացվի անտառավերականգնում և՛ տեխնիկապես, և՛ ֆինանսապես պահանջում են ավելի մեծ ներդրումներ, քան հնարավոր էր անել այլ տարածքների վրա: Սակայն Ընկերությունը պարտավորություն է ստանձնել իրականացնելու այդ աշխատանքները, քանի որ նշված 4 տարածքները հատուկ նշանակություն ունեն և՛ համայնքի, և՛ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համար: Մյուս երկու տարածքները գտնվում են Արծվանիկի պոչամբարի արևելյան հատվածում, մայրուղու աջակողմյան և ձախակողմյան հատվածներում, մասնավորապես՝ 4,5 հա և 13,5 հա: Այդ ամբողջ տարածքը գտնվում է մոտավորապես 800-1000մ բարձրության վրա՝ «Զանգեզուր» լեռնաշղթայի լանջերին: Աշխատանքների հաջորդ փուլում իրականացվել է ծառատեսակների ընտրություն, որի ժամանակ հիմնվել ենք և՛ գրականության տվյալների,

և՛ «Բիոգեոտեխ» ՍՊԸ-ի հետ 2018-2019 թթ. ընթացքում իրականացված մեր բազմամյա ուսումնասիրությունների, ինչպես նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկված ծառատեսակների վրա: Ընտրության սկզբունքը եղել են հետևյալները. նախ, որ անտառը պետք է լիներ ոչ թե միատեսակ, այլ բազմատեսակ՝ շատ ծառատեսակներով: Բոլոր ծառատեսակները ընտրվել են էնդեմիկ, այսինքն՝ բնորոշ են տարածաշրջանին և լրացնելու են արդեն իսկ առկա անտառային ծածկույթները: Հետևաբար, ռիսկ չի հանդիսանում մյուս ծառատեսակների դուրս մղմանը: Ընտրված ծառատեսակները վտանգ չեն ներկայացնում տարածքի բուսածածկույթին: Նշված բոլոր ծառատեսակները կլիմայապես վարժեցված են և հետագա աճի, զարգացման համար լրացուցիչ խնդիրներ չեն ստեղծում: Կայուն են և՛ տեղի բնակլիմայական պայմաններին, և՛ վնասատուներին: Այս անտառավերականգնման նախագիծը ունի մի շարք դրական կողմեր, որից առաջինը՝ կշատանա տարածաշրջանում բուսական ծածկը, կնպաստի անտառների վերականգնման գործընթացին, կձևավորվեն կենդանիների համար նոր միգրացիոն ուղիներ, կապահովվի նաև ջրապաշտպան գործառույթը, այսինքն՝ կնպաստի ստորգետնյա ջրի պաշտպանությանը, ինչպես նաև Կապան համայնքի համար կունենա վիզուալ դրական ազդեցություն: Քանի որ նշված հողերը էրոզացված են ու գտնվում են քաղաքի կենտրոնում, ապա պատկերացրեք, թե կանաչապատումից հետո ինչ վիզուալ դրական ազդեցություն կունենա: Ընտրվել են մոտ 23 տեսակի ծառեր և թփեր, որոնք արտացոլված են ներկայացված հայտարարության մեջ: Ընտրվել է նաև ծառերի տնկման մեթոդիկան՝ ելնելով ինչպես անտառավերականգնման նորմերից, այնպես էլ ռելիեֆի առանձնահատկություններից: Ծառերը պլանավորվում է տնկել և՛ խրամատներով, և՛ փոսային մեթոդով, ինչպես նաև այնտեղ, որտեղ հնարավոր լինի՝ մեխանիզմների օգնությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանը ավելի շատ ունի չոր կլիմա, դիտարկվել է նաև այն բոլոր տարբերակները, որպեսզի ծառերը տնկվեն հզոր արմատային համակարգով, այսինքն կկիրառվեն ինչպես փակ, այնպես էլ բաց արմատային համակարգ ունեցող ծառեր: Պլանավորվում է, որ անտառավերականգնման աշխատանքների ընթացքում կօգտագործվեն նաև հատուկ գելային նյութեր, որոնք հնարավորություն կտան արմատային համակարգում պահել ջրի մակարդակը նորմերի սահմաններում, որը կնպաստի, որպեսզի անտառավերականգնման գործընթացը ընթանա ավելի արդյունավետ ու էֆեկտիվ: Պլանավորվում է, որ 20 հա տարածքի վրա կտնկվեն մոտ 80 000 ծառեր, այսինքն 1 հեկտարի հաշվարկով՝ 4 000 ծառ: Ռեսուրսները կտրամադրվեն Ընկերության տնկարանային տնտեսության կողմից այնքանով, որքանով որ կների տնկարանային տնտեսության հնարավորությունները, իսկ մնացած ռեսուրսները ձեռք կբերվեն համապատասխան կազմակերպություններից կամ անհատներից: Պլանավորվում է, որ անտառները կլինեն ոռոգվող, այսինքն չենք հիմնվի միայն եղանակային պայմանների վրա, այլ կոռոգվեն: Աշխատանքների մեկնարկից անմիջապես հետո ակնկալվում է, որ նշված տարածքները կանաչապատ կլինեն 4 տարվա ընթացքում:

**Զեկույց (Սասուն Մանուկյան- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն)**

Կապանի անտառային տարածքներից ժամանակին բավականին կատեգորիաներ են փոխվել, բայց սա թերևս առաջին դեպքն է, երբ ՀՀ կառավարության 30 օգոստոսի 2007 թվականի N 1045 որոշման համապատասխան կատարվում է անտառային կատեգորիայի փոփոխություն: Ուրախ եմ, որ այս գործընթացը սկսում ենք «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի հետ: Մենք, ըստ էության, սկսում ենք նոր գործընթաց և մինչև այս եղած նման որոշումների դեպքում անտառապատման աշխատանքներ չեն կատարվել: Սա սկիզբ է, որ հետագայում ևս անտառային կատեգորիայի փոփոխությունը ունենա այսպիսի ընթացակարգ: Այս առումով շնորհակալ եմ: Տարածքները, որ առաջարկվել են մարզի արդյունաբերական հսկային բավականին բարդ են անտառավերականգնման առումով: Աշխատանքը նաև փորձագետների հետ ենք կատարել: Հասկացել ենք, որ ծանր է, բայց դա մեզ համար անհրաժեշտություն է: Ինչպես նշեց մեր գործընկերը՝ միգրացիոն երթուղիներ, ջրային պաշարներ և այլն, դրանք արտադրական այն տարածքներն են, որոնց անտառապատումը թույլ է տալու մաքուր օդ ապահովել քաղաքին և մեզ համար լուրջ խնդիր հանդիսացող տարածքները դառնալու են անտառային գոտի: Կարծում եմ այս լսումին հաջորդող փուլերում մենք կգտնենք ամենալավ տարբերակը և վերջնահաշվարկում կունենանք այն արդյունքը, որին ձգտում ենք, կարծում եմ, բոլորս: Շնորհակալ եմ համատեղ աշխատանքի համար:

**Լրացում (Պերճ Խաչատրյան)**

Առաջին հայացքից կարող է թվալ, թե նշված մինչև 4 տարի ժամկետը բավականին երկար է 20 հա անտառավերականգնման համար, սակայն պետք է հստակ արձանագրել, որ այդ 4 տարին ոչ թե զուտ շիվերը տնկելու համար է, այլ որպես ընդհանուր վերջնարդյունք՝ ունենալու համապատասխան անտառապատ տարածք: Այսինքն, երբ բոլոր ընթացիկ խնդիրները կլուծվեն, համապատասխան միջոցառումներ կիրականացվեն և ամփոփելով այդ ամենը կունենանք անտառային տարածք արդեն փոխված կատեգորիայով, փոխադրված անտառների շարքին՝ համապատասխանաբար հսկողություն իրականացված վիճակում:

**Հարց (Դավիթ Հայրապետյան)**

Անտառապատման աշխատանքներից հետո այդ տարածքների խնամքը ինչպե՞ս է իրականացվելու:

**Պատասխան (Գարեգին Սևոյան)**

Անտառապատման աշխատանքներից հետո փոխանցվելու է կամ համայնքին, կամ «Հայանտառ» ՊՈԱԿ-ին հետագա գործունեության հետ կապված:

**Պատասխանի լրացում (Սասուն Մանուկյան)**

Մենք այս հարցը քննարկել ենք պարոն Ալեքսանյանի հետ: Աշխատանքների մեկնարկից սկսած «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Կապանի մասնաճյուղը մաս է կազմելու աշխատանքների: Եղել է աշխատանքային քննարկում: Ե՛վ խնամքը, և՛ անտառային կատեգորիան մինչև հասնենք այդ փուլին համատեղ է իրականացվելու: Մենք ինքներս ենք ընդունելու անտառը և բնականաբար շարունակելու ենք պահպանությունն ու խնամքը:

**Դիտարկում (Պերճ Խաչատրյան)**

Ինչպես նշեցի կառավարության 2015 թվականի որոշմամբ հանքարդյունաբերական ծրագիրը ճանաչվել է գերակա շահ և այդ 40 հեկտարը, որ պետք է անտառային ֆոնդից տեղափոխվի արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական գործունեության համար նախատեսված հողերի կատեգորիայի ֆոնդ՝ պետք է նշել, որ այդ տարածքները ճիշտ է որպես անտառ արտադրական գործունեության փուլում չեն ծառայելու, սակայն արտադրական գործունեությունը համապատասխան տարածքներում ավարտելուց հետո այդ տարածքները սահմանված կարգով ռեկուլտիվացվելու են, ծածկվելու են հողաշերտով և իրականացվելու են այլ միջոցառումներ: Այնպես չէ, որ անտառը վերցվեց ու օգտագործվեց արդյունաբերական նպատակով: Համապատասխանաբար հանրային լսումների կներկայացվի նաև ընկերության ռեկուլտիվացման ծրագիրը, որը դեռևս նախապատրաստական փուլում է: Հետևապես դա ևս պետք է հաշվի առնել, որ բացի այս 80 հեկտարից, որ իրականացնելու ենք անտառավերականգնում, անտառապատում, այն հողատարածքները, որոնք օգտագործվելու են արդյունաբերական նպատակով դրանք ևս ռեկուլտիվացվելու են և վերադարձվելու են համապատասխան կատեգորիայի շարք: Գուցե դրանք հետագայում պիտանի չլինեն գյուղատնտեսական գործունեության իրականացման համար, սակայն դրանք ռելիեֆային առումով, բնապահպանական առումով առավելագույնս անվնաս են դարձվելու:

**Լրացում (Սասուն Մանուկյան)**

Սա առաջին դեպքն է, որ անտառային կատեգորիայի փոփոխությունը այսպիսի գործընթացով անտառապատման ծրագիր է նախատեսում: Կարծում եմ սա կդառնա այն նշաձողը, որով պետք է նման որոշումները շարունակություն ստանան: Ի դեպ, դա միայն չի վերաբերվում կոմբինատին: Բոլոր այն դեպքերում, երբ անտառային կատեգորիայի փոփոխություն է լինում, կառավարությունը սահմանել է նույն կարգը: Այսինքն, այստեղ կոմբինատը թիրախավորելը այդքան էլ ճիշտ չէ և պիտի նկատի ունենանք, որ սա վերաբերվում է բոլոր դեպքերին:

**Լրացում (Դավիթ Համբարձումյան-ավագ անտառապետ)**

Բոլոր տարածքները շրջապատված են անտառով և մասամբ այդ տարածքներում կա անտառային հող և այս լրացման հետևանքով կստանանք արդեն ամբողջականացված անտառ, ոչ թե առանձին ծվեններ: Պարոն Հայրապետյանի հարցի հետ կապված նշեմ, որ ինքը հենց իրականում առանձին կղզիներ են, որոնք անտառային տարածքի մեջ են գտնվում: Հետագայում կունենանք ընդհանրացված տարածք:

**Դիտարկում (Պերճ Խաչատրյան)**

Անդրադառնալով գերակա հանրային շահ ճանաչված հողերին, Հ. Մկրտումյանին խնդրեց հանրությանը ներկայացնել ընտրված տարածքների ներկա տեսքը, պարզաբանելով, թե արդյոք այդ հողերը ներկայումս անտառածածկ են, թե ընդամենը անտառային կատեգորիայի հողեր են՝ այլ բուսականությամբ:

**Պատասխան (Հասմիկ Մկրտումյան)**

Նշված տարածքներում, որ ճանաչվել է գերակա շահ, նախքան 22 մլն.տ/տարի արտադրողականության բարձրացումը մենք իրականացրել ենք բազմաթիվ հետազոտություններ, ինչպես սահմանված է օրենքով և հիմնվելով միջազգային փորձի վրա: Անգամ փորձաքննությունը անցնելուց հետո մենք շարունակում ենք այդ տարածքներում իրականացնել կենսաբազմազանության ուսումնասիրություն: Իրականում այդ հատվածները, որոնք և անտառային հողեր են կամ հողեր են, որոնք անտառային չեն, սակայն կան առաջին հայացքից թվացող անտառային ծածկույթներ, այդտեղ ավելի շատ ծառաթփային տեսակներ են, որոնք որ չունեն ինչ-որ հատուկ նշանակության ծառեր կամ թփեր: Այդ ամբողջ տարածշրջանում չկան Կարմիր գրքում գրանցված որևիցե տեսակներ: Հարկ է նաև նշել, որ այդ 40 հա տարածքները, որոնք ճանաչվել են գերակա շահ և 80 հա տարածքը, որտեղ պետք է իրականացնենք անտառավերականգնում՝ այդ տարածքները չեն պատկանում հատուկ պահպանվող կամ պատմամշակույթային տեսակի հողերին, ինչպես նաև ընդհանուր օգտագործման նպատակով կանաչապատման տարածքներ չեն: Ամփոփելով խոսքս, կարող եմ ասել՝ այն անտառավերականգնումը, որ ընկերությունը իրականացնում է, ինքն իր որակով և տեսակով գերազանցելու է այն, ինչը, որ ճանաչվել է գերակա շահ այդ տարածքներում:

**Լրացում (Սասուն Մանուկյան)**

Այն տարածքները, որ առաջարկվել են այնտեղ անտառային գոտի չկա: Ըստ էության տեղի կունենա կատեգորիայի բարձրացում, կլինի անտառային լիարժեք տարածք:

**Ամփոփում (Դավիթ Հայրապետյան)**

Շնորհակալություն բոլորին մասնակցության և այս կառուցողական քննարկման համար: Այս նախագծի արդյունքում մենք կունենանք անտառապատ տարածքներ՝ հատկապես Կապան քաղաքի կենտրոնական երկու հատվածներում, որը գեղագիտական տեսք կհաղորդի քաղաքին: Շնորհակալություն եմ հայտնում նախաձեռնող կողմին՝ «ՀՊՄԿ» ՓԲ ընկերությանը և մաղթում հաջողություններ այս և հաջորդիվ նմանատիպ միջոցառումների համար:

***Ստորագրություններ՝***

***Հանրային քննարկման պատասխանատու՝***
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի ղեկավար՝ Գևորգ Փարսյան _____

***Ձեռնարկող՝***
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերություն գլխավոր տնօրենի տեղակալ՝ Թոմաս Հոֆմանն _____

***Հանրային քննարկման վարող՝***
ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դավիթ Հայրապետյան _____

***Հանրային քննարկման արձանագրող՝***
ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ՝ Արմինե Սահակյան _____